

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ «ՍԱՐԻ ԱՂՋԻԿ» ԵՐԳԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ԱԼԻՆԱ ՓԱՀԵՎԱՆՅԱՆ*

Հղման համար. Վարդանյան, Արտակ, Փահլևանյան, Ալինա: «Ժողովրդական «Սարի աղջիկ» երգի ազգային պատկանելության շուրջ»: *Արվեստագիտական հանդես*, N 1 (2023): 137-150. DOI:10.54503/2579-2830-2023.1(9)-137

Հայկական ժողովրդական «Սարի աղջիկ» (թուրքերեն՝ “Sari gelin”, ադրբեջաներեն՝ “Sari gəlin” («Շեկ նորահարս», «Շեկլիկ աղջիկ») երգը տարածված է ոչ միայն հայերի, թուրքերի և ադրբեջանցիների շրջանում, այլև որպես հայկական ժողովրդական երգ՝ թարգմանված, փոխադրված կամ բնօրինակով երգում են տարածաշրջանի այլ ժողովուրդներ՝ պարսիկները, քրդերը, հույները և այլք:

Երգի ազգային պատկանելության շուրջ երկարատև և բուռն վեճեր են եղել ադրբեջանցիների հետ, որոնք ժողովրդական հանրահայտ այս ստեղծագործությունը իրենցն են համարում, թեև նրա հայկականության մասին բարձրաձայնել են անգամ թուրք հայտնի արվեստի գործիչներ: Այնուամենայնիվ, երգի թուրքերեն տարբերակի բնագիրն է նաև ակնհայտորեն վկայում, որ այն երգ է հայուհու մասին, ստեղծված է հայկական միջավայրում՝ հայ հեղինակի կողմից:

Հաշվի առնելով նաև երաժշտագիտական քննությունը, որով հաստատվում է, որ մեղեդին հարազատ է հայկական ժողովրդական երգամտածողությանը, ունի հայկական ֆոլկլորում բազմաթիվ տարբերակներ, ինչի մասին վկայում են բերված հրապարակումները (ամենահինը գրանցել է Կոմիտասը՝ 1891 թվականին), ակնհայտ է դառնում երգի հայկական լինելու հանգամանքը:

Քանայի քաներ՝ հայկական ժողովրդական երգ, հայերեն, թուրքերեն, թուրքալեզու հայկական ֆոլկլոր, հայկական մշակույթ, Կարին, մեղեդի:

Ներածություն

Հայկական ժողովրդական «Սարի աղջիկ» (թուրքերեն՝ “Sari gelin”, ադրբեջաներեն՝ “Sari gəlin” («Շեկ նորահարս», «Շեկլիկ աղջիկ») երգը տարածված է ոչ միայն հայերի, թուրքերի և ադրբեջանցիների շրջանում, այլև որպես հայկական ժողովրդական երգ՝ թարգմանված, փոխադրված կամ բնօրինակով երգում են տարածաշրջանի այլ ժողովուրդներ՝ պարսիկները, քրդերը, հույները և այլք: Ադրբեջանցիները, սակայն, մեղմ ասած, շարունակում են անհիմն նկրտումներ դրսևորել նաև ժողովրդական հանրահայտ այս ստեղծագործության հանդեպ և երգը ադրբեջանական համարել [23, էջ 10]:

* ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող, Հայաստանի գրողների միության անդամ, բանասիրական գիտությունների թեկնածու, artva@list.ru, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, արվեստագիտության թեկնածու, alinapahlevanyan1@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 31.03.2023, գրախոսելու օրը՝ 10.05.2023, տպագրության ընդունելու օրը՝ 01.06.2023:

Սրանով էլ հիմնավորվում է սույն հոդվածի արդիականությունը: Նորոյթը և նպատակն է երաժշտագիտական և բնագրագիտական առումով քննել երգի մեղեդին և բնագիրը, պարզաբանել երգի իրական ազգային պատկանելությունը:

Ընդհանուր տեղեկություններ

«Սարի աղջիկ» երգը Օսմանյան Թուրքիայի հայաբնակ շրջաններում հայտնի է եղել դեռևս 19-րդ դարում: Տարածված է եղել նաև Զավախքում, Շիրակում, որտեղ բնակվող հայերը առավելապես Էրզրումի նահանգից (պատմական Կարնո աշխարհ) են ժամանակին Ռուսական կայսրության տարածք գաղթել: Մեծ եղեռնից փրկված հայերի սերունդները «Սարի աղջիկը» երգում են աշխարհի տարբեր երկրներում:

Երգի հայերեն տարբերակը երգել են անվանի հայ երգիչներ Շարա Տալյանը, Պավել Լիսիցյանը, Ռուբեն Մաթևոսյանը, Ֆլորա Մարտիրոսյանը և այլք, մեղեդային տարբերակը կատարել են դուդուկի վարպետներ Զիվան Գասպարյանը, Գևորգ Դաբաղյանը և այլք:

Երգի թուրքերեն տարբերակը երգում են ամենահայտնի թուրք երգիչները, նրանցից ոմանք՝ նաև հայերեն: Այդուհանդերձ, երգի ազգային պատկանելության շուրջ երկարատև և բուռն վեճեր են եղել ադրբեջանցիների հետ, թեև նրա հայկականության մասին բարձրաձայնել են թուրք երգահան Շանար Յուրդաթափանը, երգչուհի Սեզեն Աքսուն, լրագրող Մուրադ Էրթաշը, դոկտոր Գյոքչեն Քարանֆիլը, անգամ նախկին արտգործնախարար և վարչապետ Ահմեդ Դավութօղլուն և թուրք անվանի այլ գործիչներ ու մտավորականներ [21]: Թուրքական հեռուստաալիքների եթերում երգը բազմիցս հայերեն հնչել է նաև ստամբուլահայ երգչուհի Սիբիլի և թուրք երգչուհի Սեզեն Աքսուի կառարմամբ: «Սարի աղջիկը» նաև պոլսահայ երջանկահիշատակ մտավորական Հրանտ Դինքի շատ սիրելի երգն էր, որ հայերեն հնչեց նրա հուլարկավորության ժամանակ:

Բնագրագիտական դիտարկումներ

Քննարկվող երգի թուրքերեն տարբերակը վերլուծելուց առաջ, նախ հիշենք պատմական իրողությունների թելադրանքով հայ իրականության մեջ դարեր շարունակ ստեղծված, գոյատևած և մինչև մեր օրերը հասած՝ հայկական թուրքալեզու բանահյուսության, մանավանդ ասացվածքների, հանելուկների, երգերի, մասնավորապես՝ ողբերգերի, և ժողովրդական երգարվեստի բազմաթիվ այլ նմուշների մասին: Անգամ Մեծ եղեռնի օրերին ստեղծված հայկական բազմաթիվ երգեր թուրքալեզու են եղել [19, 22]: Հիշենք հանրահայտ «Դեր Ջորի ողբը» [17, էջ 110].

*Սաբաքրան գալքդըմ, գյունաշ փառլիյոր,
Չեթելար օթուրմիշ մովզեր յաղլիյոր,
Էրմանիա բաքդըմ յաման աղլիյոր,
Դինի բիր ուղրունա գեդան էրմանի:*

Առավոտ վեր կացա, արևն էր փայլում,
 Չեթեններ նստած՝ մովզերներ յուղում,
 Հայերին նայեցի՝ լալիս են, ողբում,
 Հանուն հավատքի նահատակ հայեր:

Հիշենք նաև, որ անցյալ դարերում ոչ միայն ողջ Անատոլիայի հայաբնակ թուրքախոս և հայախոս շրջաններում և Արևմտյան Հայաստանում էր թուրքալեզու ֆոլկլոր ստեղծվում, այլև Արևելյան Հայաստանում: Օրինակ՝ Նախիջևանի Ազնաբերդ գյուղում մինչև անցյալ դարի կեսերը բոլոր կանոնիկ ողբերգերը թուրքերեն էին, իսկ հարևան Օծոփ (Բադամլու) գյուղում՝ նաև հանելուկներն ու ասացվածքները: Հարյուրավոր հայ աշուղներ մինչև 19-րդ դարի վերջերը իրենց երգերը հիմնականում թուրքերեն էին հորինում [6, 2]: Հետևաբար, բնական է հայ բանահյուսության մեջ թուրքալեզու նմուշների առկայությունը:

Հայերը հարկադրված էին տիրապետել նաև թուրքերենին և քրդերենին՝ դարեր շարունակ ապրելով Օսմանյան Թուրքիայի գերիշխանության տակ: Բնականաբար, ստեղծագործական ձիրքով օժտված հայն իր գեղարվեստական ապրումները, իր հոգու խոսքը պետք է արտահայտեր՝ ձգտելով հասկանալի լինել նաև այդ լեզուներով: Բացի դա, Թուրքիայի հայաբնակ բազմաթիվ շրջաններում հայերենը խստով արգելված էր:

Հաշվի առնելով այս ամենը՝ առավել ևս պետք է պնդել, որ հայ բանահյուսության մեջ երգի թուրքալեզու լինելը երբեք առիթ չի կարող դառնալ այն հայկական մշակույթից օտարելու համար:

Իսկ «Սարի աղջիկ» երգի պարագայում ադրբեջանական «վարկածի» սնանկ լինելը բացահայտելու մի շատ կարևոր կոման զարմանալիորեն ընձեռում է հենց թուրքալեզու տարբերակը: Թուրքերեն բնագրի առաջին իսկ տողերից դժվար չէ կռահել, որ երգի հերոսուհին ոչ այլ ոք է, քան կարնեցի հայ աղջիկը:

Erzurum çarşı pazar Neynim aman, aman, (2) Sari gelin, İçinde bir kız gezer, Nenen ölsün, Sari gelin, aman, (3) Suna yarım.	Էրզրումի շուկայում Ախ, ինչ անեմ, աման, (2) Շեկլիկ հարսիկ, Մի աջիկ էր անց կենում, Մերդ մեռնի, Շեկլիկ հարսիկ, աման, (3) Սոնա յար իմ:
---	--

Ուշադրություն դարձնենք, որ իրադարձությունները տեղի են ունենում Էրզրումում՝ Հայոց երբեմնի մայրաքաղաք Կարինում, որի բնակչության բացարձակ մեծամասնությունը մինչև Մեծ եղեռնը հայեր էին, և շուկան էլ անցյալում այն եզակի վայրերից էր, որտեղ կարող էին միմյանց հանդիպել անձանտթ տղան ու աղջիկը:

Ուշագրավ են նաև կրկներգի բառերից մի քանիսը: Նախ՝ աղջկա շեկ լինելը ավելի է ընդգծում հայ լինելու հանգամանքը, երկրորդը՝ «սոնա» բառը (թուրքերենում՝ suna («վայելչագեղ, հիասքանչ»), որ առկա է հայերենի բարբառներում (մասնավորապես՝ Վանի բարբառում [5, էջ 203]) և նշանակում է «բարձ-

րահասակ, վայելչագեղ», թուրքերենը փոխառել է հայերենից: Հետաքրքիր է, որ «սոնա յար» բառակապակցությունը կարելի է հանդիպել հայկական ժողովրդական բազմաթիվ երգերում, մասնավորապես՝ Կոմիտասի գրանցած հայտնի երգերում [12, էջ 172]:

Elinde divit kalem, Neynim aman, aman, (2) Sari gelin, Dertlere derman yazar, Nenen ölsün, Sari gelin, aman, (3) Suna yarim.	Ձեռքին բռնել էր դալամ, Ախ, ինչ անեմ, աման, (2) Շեկլիկ հարսիկ, Գրում էր դարդիս դարման, Մերդ մեռնի, Շեկլիկ հարսիկ, աման, (3) Սոնա յար իմ:
---	--

19-րդ դարում Օսմանյան Թուրքիայի բազմաթիվ խոշոր բնակավայրերում (Կոստանդնուպոլիս, Ջմյուռնիա, Մարաշ, Սեբաստիա, Ամասիա, Վան, Մուշ, Այնթապ և այլն) արդեն գործում էին բազմաթիվ հայկական վարժարաններ, իսկ 1811թ. դպրության խոշորագույն կենտրոն Կարինում էր հենց հիմնադրվել հայոց առաջին կրթական հաստատությունը՝ Կենտրոնական մայր վարժարանը, որը հետագայում վերանվանվել էր Արծնյան երկսեռ վարժարան: Այնուհետև այնտեղ բացվել էին Հոփսիսիմյան օրիորդաց վարժարանը և մի ամբողջ շարք երկսեռ վարժարաններ [16, էջ 94]: Հետևաբար, թե 19-րդ դարում՝ ոչ միայն Կարինում, այլև ողջ Մերձավոր Արևելքում, ո՞ր ազգի աղջկա ձեռքին կարող էր գրիչ լինել, միանգամայն և միանշանակորեն պարզ է:

Erzurumda bir kuş var, Neynim aman, aman, (2) Sari gelin, Kanadında gümüş var, Nenen ölsün, Sari gelin, aman, (3) Suna yarim.	Էրզրումում մի թռչնակ, Ախ, ինչ անեմ, աման, (2) Շեկլիկ հարսիկ, Թևերին ուներ արծաթ, Մերդ մեռնի, Շեկլիկ հարսիկ, աման, (3) Սոնա յար իմ:
--	---

Այստեղ էլ ակնհայտ է, որ խոսքը հայ արծաթագործության նշանավոր կենտրոն Կարինի, նրա հինավուրց տարազի անբաժան մասը կազմող արծաթ-յա համբավավոր զարդերի մասին է [20, էջ 66-68]:

Yarim gitti gelmedi, Neynim aman, aman, (2) Sari gelin, Elbet bunda bir iş var, Nenen ölsün, Sari gelin, aman, (3) Suna yarim.	Յարս գնաց ու չեկավ, Ախ, ինչ անեմ, աման, (2) Շեկլիկ հարսիկ, Հաստատ ուներ մի պատճառ, Մերդ մեռնի, Շեկլիկ հարսիկ, աման, (3) Սոնա յար իմ:¹
---	---

¹ Երգի թուրքերեն բնագրի թարգմանությանն օժանդակելու համար շնորհակալություն ենք հայտնում պատմական գիտությունների թեկնածու, թուրքագետ Սերգեյ Մանվելյանին:

Եվ ի՞նչ խանգարող հանգամանք կարող էր լինել տղայի և աղջկա հանդիպման համար: Ի՞նչ պատճառ կարող էր լինել, եթե ոչ առաջին հերթին սոցիալական տարբեր խավերի պատկանելու հանգամանքը, իսկ երգը թուրքերի կողմից սիրվելուց և նրանց շրջանում տարածվելուց հետո՝ բնականաբար, նաև ազգային և կրոնական պատկանելության հանգամանքը:

Արևելահայ տարբերակ՝	Արևմտահայ տարբերակ՝
Վարդ սիրեցի, փուշ դառավ, Լե-լե յաման, (3) Գնաց ուրիշին առավ, Ախ, մերդ մեռնի, Սարի աղջիկ, օյ-օյ, Քարի աղջիկ, օյ-օյ, Քարսիրտ աղջիկ, օյ-օյ, Քարսիրտ աղջիկ...	Ամպել ա փառա-փառա, Լե-լե, աման, աման, (2) Սարի աղջիկ, Ես իմ սիրածին չառա, Ախ, մերդ մեռնի Սարի աղջիկ աման, (3) Քարսիրտ աղջիկ...

Նշենք նաև, որ հետագայում արևելահայերենի և արևմտահայերենի փոխադրված տարբերակները կրկին անպատասխան սիրո մասին են, թեև բնագրի առումով տարբերվում են թուրքերեն տարբերակից: Հայերեն տեքստերում երբեմն պահպանվել է բնօրինակի «սարի գյալին» բառակապակցությունը, երբեմն էլ այն փոխարինվել է հայերեն «սարի աղջիկ» բառակապակցությամբ:

Իսկ ինչ վերաբերում է աղբրեջանական տարբերակին, ապա այն նույնպես շոշափում է անպատասխան սիրո թեման և հիմքում ականհայտորեն ընկած են թուրքերեն և արևելահայերեն տարբերակները: Հետևաբար, աղբրեջաներեն բնագրի քննությունն ավելորդ ենք համարում:

Երաժշտագիտական դիտարկումներ

Հայ երաժշտագետների և ողջ երաժշտասեր հասարակության շրջանում երբեք կասկած չի հարուցել «Սարի գյալին» («Սարի աղջիկ», «Շեկլիկ աղջիկ», «Շեկ նորահարս») ժողովրդական երգի հայկական լինելու հանգամանքը: Երգը սիրային-քնարական ժանրին պատկանող ամենասիրված և տարածված երգերից է, գրի է առնվել երաժիշտ-բանահավաքների կողմից՝ դեռևս 19-րդ դարի վերջերից: Երգի մեղեդային բազմաթիվ տարբերակները, որ գոյություն ունեն բազմաթիվ տեքստերով, բոլորն էլ քնարական բնույթի են: Ամենահին գրառումը Կոմիտասինն է՝ արված է 1891 թվականին («Կայնել ես վարդի հովին») [8, էջ 69]:

8(3). ԿԱՅՆԵԼ ԵՍ ՎԱՐԴԻ ՀՈՎԻՆ

ԲՃ. Միջակ. Moderato

Կայ - նել ես վար - դի հո - վին, և,
 քա - մին տա դո - շիդ մո - վին. Ախ,
 և, նա - նի, քան, և, ես և, դա - ռիք եմ:

Այս նմուշի մեղեդային տարբերակներից է «Կայնել ես վանքի հովին» երգը [11, էջ 49]:

87 (331). ԿԱՅՆԵԼ ԵՍ ՎԱՆՔԻ ՀՈՎԻՆ

[Միջակ. Moderato]

Բգդիք

Քննարկվող երգի հետ բերված մեղեդային տարբերակների նմանությունը պայմանավորված է դրանց ենթարկվածությամբ հայկական երգամտածողության օրենքներին:

Հայ ժողովրդական սիրային-քնարական երգերի գերակշռող մասի հիմքում ընկած է էոլական ձայնակարգը (լադ), որը համապատասխանում է եվրոպական մինորին, ընդ որում՝ չափազանց կարևոր նշանակություն է ստանում կվինտային օժանդակ հենակետը, որը կարծես հակադրվելով հիմնաձայնին (տոնիկա), խթանում է մեղեդու հետագա ծավալումը:

Երկու երաժշտական նախադասությունից կազմված պարբերության մեջ առաջինը հաճախ սկսվում է աստիճանական վերընթաց շարժմամբ կամ թռիչքով դեպի կվինտային բարձրակետ, այնուհետև վարընթաց շարժմամբ, ընդգծելով նախ կվարտային հնչյունը, բազմապիսի շրջազարդումներով հարստացնելով մյուս ձայնաստիճանները, վայրէջք է կատարում դեպի հիմնաձայն: Երկրորդ նախադասությունը ծավալվում է նույն սկզբունքով, սակայն այն տարբերությամբ, որ կվինտային քայլը սեղմվում և դառնում է կվարտա:

Այսպիսին է հիմնականում հայկական ժողովրդական քնարական երգերի մեղեդու ծավալման տրամաբանությունը: Ի հաստատումն՝ բերենք ևս մեկ օրինակ Կոմիտասի վաղ շրջանի գրառումներից՝ «Կայնել ես ախա-բախա» երգը [9, էջ 120]:

180. ԿԱՅՆԵԼ ԵՍ ԱՌԱՐԱՆԱ

[Շարժում. Con moto]

Կայ-նել ես ա-խա-րա-խա, նայ, նայ, նայ,
 նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,
 նայ, նայ, նայ, [լա-չա-կիդ տու-տը կախ ա,]
 նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,
 նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ:

Նույն սկզբունքով է կառուցված նաև համաժողովրդական սեր վայելող «Դլե յաման» («Լե, լե, յաման») երգը, որն իր պատվավոր տեղն ունի հայկական ժողովրդական երգերի գանձարանում [10, էջ 100]:

240 (221). ԼԵ, ԼԵ, ՅԱՄԱՆ

[Ծամր, ծորում, երգային, հուզումնալից]
 [Largo, molto cantando, affetuoso]

Վառ

Լե, լե, յա-ման, մեր տուն ծեր տուն
 դի-մաց դի-մաց,
 լե, լե, յա-ման, հե-րից
 ա-նեմ աչ-քով ի-մաց:

Նշանավոր երգասաց Հայրիկ Մուրադյանը իր մտապահած 150 նմուշից կազմված «Հայրենի երգեր» ժողովածուի ծանոթագրությունների բաժնում [17, էջ 132] հայտնում է, որ երգը տարածված էր Վասպուրականի և Մոկսի բոլոր գավառներում: Իր տարբերակը նա գրի է առել 1970-ական թվականներին՝ շատախցի Արտաշես Աբրահամյանից: Վերջինս տեղեկացրել է, որ երգը 19-րդ դարում հորինել է Վասպուրականի Հայոց ծոր գավառի Կղզի գյուղի բնակչուհի, տաղանդավոր երգասաց՝ Բոլե անունով մի երիտասարդ կույր աղջիկ: Երգը սիրվել և տարածվել է, բնականաբար, կորցնելով իր ստեղծողի անունը:

«Դլե յաման» երգի հրատարակված բազմաթիվ տարբերակները գրի են առնվել Կոմիտասի [9, էջ 100; 10, էջ 100; 12, էջ 102], Հակոբ Հարությունյանի [18, էջ 15] և այլոց կողմից: Երգի մի տարբերակ էլ տեղ է գտել Երևանի Կո-

միտասի անվան պետական կոնսերվատորիայի «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» մատենաշարում [14, էջ 129]: Երգի հրատարակված տարբերակների համեմատությունը ցույց է տալիս, որ այս դեպքում ևս մեղեդու ծավալումը ենթարկվում է հայկական ժողովրդական երգամտածողության օրենքներին և դրա շնորհիվ դարձվածքային ակնհայտ նմանություն է ստեղծվում «Սարի գյալին» երգի հետ:

Այս երևույթը տեսնում ենք թե՛ Արևելյան, թե՛ Արևմտյան Հայաստանին վերաբերող նմուշներում: Որպես օրինակ՝ կարելի է նշել Կոմիտասի Պոլսո շրջանի սան Միհրան Թումաճանի գրառումները, որոնք վերաբերում են Այնթապ քաղաքին («Ախ Զեյնո, Զեյնո») [3, էջ 89], Ակնա շրջանին («Բարի լուս, աղվոր») [3, էջ 125], Տիգրանակերտի շրջանին («Էրնեկ էն էլ հին օրե») [4, էջ 49]:

Նույն տրամաբանությամբ ծավալվող օրինակներն անթիվ-անհամար են: Ինչ վերաբերում է բուն «Սարի գյալին» երգին, ապա բերենք նախ Կոմիտասի գրառումը՝ «Աղջի, մերդ մեռել ա» [12, էջ 122], որն արված է 1913 թ. Երևանի նահանգի Սուրմալու գավառում:

276(1). ԱՐՋԻ, ՄԵՐԸԴ ՄԵՌԵԼ Ա

[Գ.Մայրոն. Andante con moto]

Աղ - ջի, մե - ռըդ մե - ռել ա,

մեյ - միմ ա - ման, օյ, օյ, մեյ - միմ ա -

ման, օյ, օյ, մեյ - միմ ա - ման.

շո - ռե - ռըդ կեղ - տո - տել ա,

վայ, մե - ռըդ մեռ - մի սա - ռի աղ -

ջիկ, օյ, օյ, մա - ռալ աղ - ջիկ, օյ, օյ,

ջեյ - ռան աղ - ջիկ:

Ժամանակագրական իմաստով «Սարի գյալին» երգի հնագույն գրառումներից է Կոմիտասի ժամանակակից, բազմավաստակ մանկավարժ, երաժիշտ-բանագետ, նկարիչ Արշակ Բրուսյանի նմուշը՝ զետեղված նրա «Ռամկական մրմունջներ» ժողովածուում, որը հրատարակվել է 4 անգամ (1895-1904): Ա. Բրուսյանը երգերը գրառել էր հայկական նոտագրությամբ: Եվրոպական նոտագրությամբ և

Ա. Բրուսյանի թողնուիով՝ պրոֆեսոր Մարգարիտ Բրուսյանի խմբագրությամբ ժողովածուն լույս է տեսել 1985 թ. Երևանում: Ահա երգի՝ Ա. Բրուսյանի գրառած տարբերակը [1, էջ 101]:

87 (158, 180). ՇԱՌԻ ԵՄ ՏՆԿԵԼ՝ ԲԱՐ ԿՈՒՋԻՄ (Սարի գյալին կամ էլի Մարոն)
САРИ ГЯЛИН !

Չափավոր

Օտոտ եմ պրկ-կնի՛ բար կու-վիմ, է - լի Մա - րոն,
է - լի Մա - րոն, է - լի Մա - րոն, է - լի Մա - րոն,
մա-պիս ան-գին բար կու-վիմ, հոտի մե-րդ մեռ-նի, սա - թի գյա-լին,
սա - թի գյա - լին, սա - թի գյա - լին, Մա - րո յա - թին:

Հետաքրքրական է Սանկտ Պետերբուրգի կոնսերվատորիայի պրոֆեսոր Քրիստափոր Քուշնարյանի կազմակերպած գիտարշավի ընթացքում 1928 թ. Սյունիքի մարզի Գորայք գյուղում Պողոս Պողոսյանից գրառված նմուշը՝ «Էսօր գութանը մերն է», որը տեղ է գտել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կողմից հրատարակվող «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարում [13, էջ 78]:

41. ԷՍՕՐ ԳՈՒԹԱՆԸ ՄԵՐՆ Է
ՍՅՈՒՆԻՔ

♩ = 63

Էս - օր գու - թա - նը մերն է,
Ել - նիմ, ա - ման, ա - ման, Ել - նիմ, ա - ման, ա - ման, սա - թի աղ - ջիկ,
Գու - թան վա - րդեն իմ յարն է,
Դոպ, մե-րդ մեռ - նի, սա - թի աղ - ջիկ, ա - ման,
Սա - թի աղ - ջիկ, ա - ման, սա - թի աղ - ջիկ, ա - ման, սի - րուն աղ - ջիկ:

Երգի տարբերակներից գրի է առել նաև Սպիրիդոն Մելիքյանը՝ 1914 թ. Թիֆլիսի Հայոց երաժշտական ընկերության կազմակերպած գիտարշավի ընթացքում: Հավաքագրված նյութերի հիման վրա 1917 թ. նրա կազմած և հրատարակած «Շիրակի երգեր» ժողովածուում զետեղված է «Սարի գյալին» երգի երկու տարբերակ [7, էջ 48-49]:

Ապ. Վեկիժյան
«Զինակի երգեր», №103

Սարի գեւորն

♩ = 58

Մեծ-պեղ է փա - րա, փա - րա, Նեյ-Նեյ աճ-ճան,
 Նեյ-Նեյ աճ-ճան, Նեյ-Նեյ աճ-ճան, Ես ի՞նչ սի-րա-
 ծու չա - րա, Բա, Դե-րդ Դե-րդ, Կա- յի աղ-ջիկ,
 Կա - յի աղ-ջիկ, Թո - րա աղ-ջիկ:

Ապ. Վեկիժյան,
«Զինակի երգեր», №104.

Սարի գեւորն

♩ = 50

Մեծ-պեղ, Բա-ղը Կա - ճառ է, Նեյ-Նեյ աճ-ճան,
 Նեյ-Նեյ աճ-ճան, Նեյ-Նեյ աճ-ճան, Բա-ղը Դե-րդ
 Ե - Դե է, Կար, Կա-ճառ Ե - Կառ, Կա - յի գեւ-որն,
 Կա - յի գեւ-որն, Կա - յի գեւ-որն, Կա - յի գեւ-որն,
 Կա - յի գեւ-որն, Կա - յի գեւ-որն:

Այսօր էլ «Սարի աղջիկ» երգը սիրված է, հնչում է ամենուր՝ մեր ժողովրդի երաժշտական կենցաղում, գրի է առնվում հավաքչական աշխատանքով զբաղվող գիտարշավների ընթացքում: Ահա անցյալ դարի երկրորդ կեսի գրառումներից մեկը՝ կատարված Սպիտակի շրջանում 1975 թ.՝ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողական գիտարշավախմբի կողմից: Նմուշը զետեղված է կոնսերվատորիայի Հայ երաժշտական ֆուլկլորագիտության ամբիոնի հրատարակած ժողովածուում [14, էջ 89]:

Իհարկե, ֆուլկլորը՝ որպես դարերի խորքից եկող բանավոր, ոչ պրոֆեսիոնալ արվեստ, չի կարող պատասխան տալ, թե այս կամ այն երգը ե՞րբ է ստեղծվել, որտե՞ղ, ո՞վ է եղել հեղինակը: Պարզ է, որ ժողովրդի կողմից հավանության արժանացած յուրաքանչյուր երգ սիրվել է, տարածվել, անցել սերնդեսերունդ, դարից դար և մեր օրերը հասել: Այսպես է ձևավորվել այն ֆուլկլորային շտեմարանը, որը դարձել է տվյալ ազգի հոգու հայելին:

58. ՍԱՐԻ ԳՅԱԼԻՆ

СВЕТЛОБОЛОСЯЯ НЕВЕСТА BLONDE BRIDE

$\text{♩} = 126$

Ե - լա եր-թիկ խոտ թա - փի, նեյ-նիմ ա - ման, ա - ման,
 նեյ-նիմ ա - ման, ա - ման, սա - ռի գյա - լին, քեզ մեկ խըն ծո - րով խա - փի,
 հովի, մե-րդդ մեռ - նի, սա - ռի գյա - լին, ա - ման, սա - ռի գյա - լին, ա - ման,
 սա - ռի գյա - լին, ա - ման, Սա - թո յա - ռին: Է-կան ա - փն յարդ է - կավ,
 է - լի Մա - թո, է - լի Մա - թո, ցա - վոտ Մա - թո,
 խել-քա-թափ-ված դուրս թը - ու, հովի, նա նար օլ տուն, սա - ռի գյա - լին,
 սա - ռի գյա - լին, սա - ռի գյա - լին, սա - ռի գյա - լին, Սա - թո յա - ռին:

Այս կամ այն ժողովրդական երգի ազգային պատկանելությունը որոշվում է տվյալ ժողովրդի կենցաղում տարածվածության աստիճանով, գիտության և արվեստի գործիչների կողմից հավաքագրման և հրատարակման փաստերով, երգի մեղեդու համապատասխանությամբ տվյալ ազգային երգամտածողության օրենքներին, բառային տեքստում արտահայտված ազգային հոգեբանությամբ, տվյալ ժողովրդի ֆոլկլորում բյուրեղացած բանաստեղծական կերպարներով և այլն:

Յուրաքանչյուր ժողովրդական երգ, եթե սիրվել և տարածվել է նաև հարևան ժողովուրդների մեջ, չպետք է կովածադիկ դառնա, այլ հայկառակը՝ մերձեցման և միմյանց մշակույթը հարգելու միջոց, քանի որ երգը սահման չի ճանաչում և հոգու սփոփանք է դառնում ճշմարիտ արվեստասեր յուրաքանչյուր մարդու համար:

Եզրակացություն

Այսպիսով, «Սարի աղջիկ» («Սարի գյալին») երգի թուրքերեն տարբերակի բնագիրը ակնհայտորեն վկայում է, որ այն երգ է հայուհու մասին, ստեղծված է հայկական միջավայրում՝ հայ հեղինակի կողմից:

Հաշվի առնելով նաև երաժշտագիտական քննությունը, որով հաստատվում է, որ մեղեդին հարազատ է հայկական ժողովրդական երգամտածողությանը, ունի հայկական ֆոլկլորում բազմաթիվ տարբերակներ, ինչի մասին վկայում են բերված հրապարակումները, ակնհայտ է դառնում երգի հայկական լինելու հանգամանքը:

Գրականություն

1. Բրուսյան Ա. Ռամկական մրմունջներ. Երևան, «Սովետական գրող», 1985:

2. Գրիգորյան Շ. Հայ աշուղական գրականության պատմություն (դրվագներ). Երևան, «Զանգակ», 2003:
3. Թումանյան Ա. Հայրենի երգ ու բան, հ. 2. Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1983:
4. Թումանյան Ա. Հայրենի երգ ու բան, հ. 3. Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1986:
5. Թուրշյան Հ. Բառարան Վանի բարբառի (աշխատասիրությամբ Հ. Մեսրոպյանի). Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2018:
6. Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանյան կայսրություն, 16-20-րդ դարեր (կազմող՝ Խ. Ամիրյան). Փարիզ, «Ժիրայր Գասպարեան», 1993:
7. Ժողովրդական երգեր. ազգագրական ժողովածու, հ. 1, Շիրակի երգեր (կազմողներ՝ Ս. Մելիքեան, Ա. Տեր-Ղևոնդեան). Թիֆլիս, «Քարթլի», 1917:
8. Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 9. Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 1999:
9. Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 10. Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2000:
10. Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 11. Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2000:
11. Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 12. Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2003:
12. Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 13. Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2004:
13. Հայ ավանդական երաժշտություն (կազմող՝ Ա. Մուրադյան), պր. 3. Երևան, ՀՀ ԳԱ արվեստի ինստիտուտ, 2008:
14. Հայ ժողովրդական երգեր և նվագներ. Թալին, պր. 7 (կազմող-խմբագիրներ՝ Ա. Փահլևանյան, Ա. Սահակյան). Երևան, «Կոմիտաս», 2012:
15. Հայ ժողովրդական երգեր և նվագներ. Սպիտակ, պր. 14 (կազմող-խմբագիրներ՝ Ա. Փահլևանյան, Ն. Աթանասյան). Երևան, «Տիգրան Մեծ», 2021:
16. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4. Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1978:
17. Հայրենի երգեր (Հ. Մուրադյանի ծայնից վերծանեց և կազմեց Ա. Փահլևանյանը). Երևան, «Սովետական գրող», 1980:
18. Հարությունյան Հ. Մանյակ. ժողովածու հայկական ժողովրդական երգերի. Երևան, «Հայպետհրատ», 1958:
19. Սվազյան Վ. Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ. Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2011:
20. Տեր-Ղևոնդյան Հ. Հայկական արձագանգողական աշխարհիկ զարդերը 19-րդ դարում, ՀԽՍՀ ԳԱ տեղեկագիր. հ. 11, Երևան, 1965:
21. Սարի աղջիկ, «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարան, https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%A1%D6%80%D5%AB_%D5%A1%D5%B2%D5%BB%D5%AB%D5%AF (ներբեռնման օրը՝ 21.03.2023).
22. Svazlian V. Ermeni soykirimi. hayatta kalan görgü taniklarinin anlattıkları. İstanbul, Belge yayinlari, 2013, 1064 s.
23. Səlimov A. Bir daha "Sari gəlin" haqqında, Ədalət. Bakı, 31.07.2010, <http://anl.az/down/meqale/adalet/2010/iyul/129428.htm> (ներբեռնման օրը՝ 21.03.2023).

References

1. Brutyan A. Ramkakan mrmunjner. Yerevan, «Sovetakan grogh», 1985.
2. Grigoryan Sh. Hay ashughakan grakanutyan patmutyun (drvagner). Yerevan, «Zangak», 2003.
3. Tumachan A. Hayreni yerg u ban, h. 2. Yerevan, HKhSH GA hrat., 1983.
4. Tumachan A. Hayreni yerg u ban, h. 3. Yerevan, HKhSH GA hrat., 1986.
5. Turshyan H. Bararan Vani barbari (ashkhata sirutyamb H. Mesropyani). Yerevan, HH GAA «Gitutyun» hrat., 2018.
6. Turkalezu hay ashughner: Osmayan kaysrutyun, 16-20-rd darer (kazmogh: Kh. Amiryan). Pariz, «Jirayr Gasparyan», 1993.

7. Joghovrdakan yerger: azgagrakan joghovatsu, h. 1, Shiraki yerger (kazmoghner: S. Melikyan, A. Ter-Ghevondyan). Tiflis, «Kartli», 1917.
8. Komitas. Yerkeri joghovatsu, h. 9. Yerevan, HH GAA hrat., 1999.
9. Komitas. Yerkeri joghovatsu, h. 10. Yerevan, HH GAA hrat., 2000.
10. Komitas. Yerkeri joghovatsu, h. 11. Yerevan, HH GAA hrat., 2000.
11. Komitas. Yerkeri joghovatsu, h. 12. Yerevan, HH GAA hrat., 2003.
12. Komitas. Yerkeri joghovatsu, h. 13. Yerevan, HH GAA hrat., 2004.
13. Hay avandakan yerajshutyun (kazmogh: A. Muradyan), pr. 3. Yerevan, HH GAA arvesti instituti hrat., 2008.
14. Hay joghovrdakan yerger yev nvagner: Talin, pr. 7 (kazmogh-khmbagirner: A. Pahlevanyan, A. Sahakyan). Yerevan, «Komitas», 2012.
15. Hay joghovrdakan yerger yev nvagner: Spitak, pr. 14 (kazmogh-khmbagirner: A. Pahlevanyan, N. Atanasyan). Yerevan, «Tigran Mets», 2021.
16. Haykakan sovetakan hanragitaran, h. 4. Yerevan, HKhSH GA hrat., 1978.
17. Hayreni yerger (H. Muradyani dzaynits vertsanets yev kazmets A. Pahlevanyane). Yerevan, «Sovetakan grogh», 1980.
18. Harutyunyan H. Manyak: joghovatsu haykakan joghovrdakan yergeri. Yerevan, «Haypethrat», 1958.
19. Svazlyan V. Hayots tseghaspanutyun: akanates veraproghneri vkayutyunner. Yerevan, HH GAA «Gitutyun» hrat., 2011.
20. Ter-Ghevondyan H. Haykakan artsatagortsakan ashkharik zardere 19-rd darum, HKhSH GA teghekagir, h. 11. Yerevan, 1965.
21. Sari aghjik, «Wikipedia» azat hanragitaran, https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%A1%D6%80%D5%AB_%D5%A1%D5%B2%D5%BB%D5%AB%D5%AF (21.03.2023).

О НАЦИОНАЛЬНОЙ ПРИНАДЛЕЖНОСТИ НАРОДНОЙ ПЕСНИ «САРИ АХЧИК»

АРТАК ВАРДАНЯН, АЛИНА ПАХЛЕВАНЯН*

Для цитирования: Варданян, Артак, Пахлеванян, Алина. «О национальной принадлежности народной песни «Сари ахчик»». *Искусствоведческий журнал*, N 1 (2023): 137-150. DOI:10.54503/2579-2830-2023.1(9)-137

Армянская народная песня «Сари ахчик [Девушка гор]» (на турецком и азербайджанском – «Sari gelin [Светловолосая невеста]») популярна не только среди армян, турок и азербайджанцев. В переводе, в переложении или в оригинале ее как армянскую народную песню поют персы, курды, греки и другие народы.

* Старший научный сотрудник отдела диалектологии Института языка имени Р. Ачаряна НАН РА, член Союза писателей Армении, кандидат филологических наук, artva@list.ru, Профессор кафедры армянской музыкальной фольклористики Ереванской государственной консерватории имени Комитаса, заслуженный деятель искусств РА, член Союза композиторов Армении, кандидат музыковедения, alinapahlevanyan1@gmail.com, статья представлена 31.03.2023, рецензирована 10.05.2023, принята к публикации 01.06.2023.

Вокруг национальной принадлежности песни велись долгие и острые споры с азербайджанцами, которые считают это популярное произведение своим, хотя даже известные турецкие деятели искусства подтвердили ее армянское происхождение. Оригинальный текст турецкой версии песни тоже проясняет, что эта песня об армянке и создана в армянской среде.

С учетом проведенного музыковедческого анализа, подтверждающего, что мелодия песни родственна армянскому народному песенному мышлению и имеет множество вариантов в армянском фольклоре, о чем свидетельствуют цитируемые публикации (самая старая из них записана Комитасом в 1891 г.), можно констатировать, что эта песня – армянская.

Ключевые слова: армянская народная песня, армянский язык, турецкий язык, туркоязычный армянский фольклор, Карин, мелодия, оригинал текста.

AROUND THE NATIONAL AFFILIATION OF THE FOLK SONG “SARI AGHJIK”

ARTAK VARDANYAN, ALINA PAHLEVANYAN*

For citation: Vardanyan, Artak, Pahlevanyan, Alina. “Around the national affiliation of the folk song “Sari aghjik””, *Journal of Art Studies*, N 1 (2023): 137-150. DOI:10.54503 /2579-2830-2023.1(9)-137

The Armenian folk song “Sari aghjik [Mountain girl]” (in Turkish and Azerbaijani: “Sari gelin [Fair-haired bride]”) is popular not only among Armenians, Turks and Azerbaijanis. In translation, transcription or in the original it is sung as an Armenian folk song by Persians, Kurds, Greeks, and other peoples.

There were long and heated debates around the national affiliation of the song with Azerbaijanis, who consider this popular work their own, even though some well-known Turkish art workers confirmed its Armenian origin. The original text of the Turkish version of the song also makes it clear that the song is about an Armenian girl and was created in an Armenian environment.

Taking into account the results of the musicological analysis, which confirm that the melody of the song is akin to the Armenian folk song thinking and has many variations in Armenian folklore as evidenced by the cited publications (the oldest of them was recorded by Komitas in 1891), we can state that this song is Armenian.

Key words: Armenian folk song, Armenian language, Turkish language, Armenian folklore in Turkish, Armenian culture, Karin, melody, original text.

* NAS RA H. Acharyan Institute of Language, Senior Researcher at the Dialectology Department, member of the Writers' Union of Armenia, Doctor of Philology, artva@list.ru; Komitas Yerevan State Conservatory, Professor at the Department of Armenian Musical Folklore, Honored Art Worker of the RA, Member of the Composers' Union of Armenia, Doctor of Arts, alinapahlevanyan1@gmail.com. The article was submitted on 31.03.2023, reviewed on 10.05.2023, accepted for publication on 01.06.2023.